

Ն Ո Ր Պ Ռ Ա Ր

Օ Ր Ա Գ Ի Ր

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

Գ Ի Ն 20 Փ Ա Ր Ա Պ Ղ Ի Ն Զ

Գ Ի Ն 30 Փ Ա Ր Ա Թ Ո Ւ Ղ Թ

Ը. Տ Ա Ր Ի 5 Բ Է Պ Ի Կ Է Կ Կ Է Լ

Ե Ր Ե Ք Շ Ա Ր Թ Ի 8 Մ Ա Ր Տ 1877

Ն. Տ. Մ Ա Ր Տ 20 Թ Ի Ի 1991

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Մ Ի Տ Հ Ա Թ Բ Ա Շ Ա

Ե Ի Կ Ա Պ Ո Յ Տ Տ Ե Տ Ր Ա Կ Ը

Միտհաթ բաշայի վրայ հաւատարմութիւն վերնադրով տետրակ մը հրատարակուել է Բարիզու մէջ. Պրնուա Պրոնզիլիք տետրակին հեղինակը այս տետրակէս մասնաւոր հաւուած մը քուրիէի զրկեր է, զոր հոս թարգմանել պատշաճ դատեցինք պարունակած կարեւոր տեղեկութեանցը համար. . . Անգղիոյ կապոյտ մասնին հրատարակուելէն վերջը արեւմտեան մամլոյն Միտհաթ բաշայի ցուցուցած համարութիւնը զարմանաց արժանի է. այս լրագիրները եթէ քիչ մ'ուշագրութեամբ քննելու ըլլան Անգղիոյ թագուհւոյն և իւր գեղարարացը մէջ եղած յարաբերութիւնները՝ զիւրու պիտի հասկնան թէ Միտհաթ բաշա ամենեւին քաղաքագիտութիւն չունէր. եթէ Բ. Դուռն գեղարարական ստորագրութիւնը ընդունէր՝ անտարակոյս խաղաղութիւնը պիտի վերահաստատուէր և Տաճկաստան կամաց կամաց իր ընդունած վերանորոգութիւնը պիտի գործադրէր. Անգղիա բոլոր այս միջոցները ցուցնելով Բ. Դրան և պէտք եղած ազդեցութիւնն ալ բանեցնելով հանդերձ չը կրցաւ համոզել զՏաճկաստան, որ անձնասիրութիւնը մէկդի թողու հասարակաց շահուց առջն, որնոր միայն խաղաղութեան վրայ կը կայանայ. անցեալը ներկային ի նպաստ կոչելով Սալիզպրի յիշեցուց Միտ-

հաթ բաշային 1827 և 28ի ձախող դէպքերը, յորում ինչ ինչ թողտուութիւնք եթէ ժամանակին ըլլուէին՝ Յունաստան հիմայ Օսմ. պետութեան մէկ մասը կը ըլլար. և աղաչեց իրեն որ նոյն սխալները չը նորոգուին, որպէս զի նոյն հետեանքներն ալ չը յաջորդեն. Բայց վայրապար ջանք, և նոյնպէս զուր փորձ մ'եղան Սալիզպրիին վեհ. Սուլթանին քով ըրածը. Կայսրը ծանոյց թէ առանց իւր պաշտօնէկցը բան մը չը կրնար ընել, թէ ժողովուրդը սոյն առաջարկութեանց ընդունուելուն դէմ է, և թէ իւր կեանքը վտանգի մէջ կ'իյնայ. Սալիզպրի աւելի յաջողութիւն գրտաւ դեռ պանախորհրդոյ մէջ և նախնական ծրագիրը բարեփոխեց. բայց ի՞նչ օգուտ. յունվարի 18ին Սալիզպրի Լօրտ Տէրպիլի կը գրեր. «Չեմ տարակուսիր որ կայսրը աւերութեանց առաջարկութիւնքը պիտի ընդունէր, եթէ Մեծ Եպարքոսը զանոնք մերժելու կողմը չը ըլլար, ընդհանուր ժողովոյն անանկ ձեռով մը ներկայացուց մեր առաջարկութիւնքը՝ որ բնականաբար պիտի մերժուէին».

Դեռ պանախորհրդոյ առաջարկութիւնքը՝ կայսրութեան անկախութեանը դէմ են ըսուելով մերժուեցան. վալիի մը ընտրութիւնը տէրութեանց թողուլ Սուլթանին պատուոյն կը դպչել ըսին. վալին հինգ տարի պաշտօնին մէջ անշարժ թողուլ, սահմանադրութեան դէմ է. հսկող յանձնաժողովոյ մը օտարներէ անդամ կարգել Բարիզու դաշնագրոյն իններորդ յօդուածին հակառակ է. լաւ

էր մեռնիլ քան թէ այսպիսի պահանջմանց ստորագրել կըսէր Միտհաթ բաշա. կը պատերազմինք և պատերազմին բոլոր աղէտները ո՛րով յանձն կառնուենք, միայն թէ Բարիզու դաշնագրոյն իններորդ յօդուածը չը ջնջուի գոչեցին միայն ընդհանուր ժողովոյ բազմականները. և Եւրոպական մամուլը այս հաստատամտութիւնը և հայրենասիրութիւնը գովեց. Մնկախ միճակի մը իրաւունքները Եւրոպիոյ քաղաքագէտք մուշեք էին, և միայն շնորհիւ Միտհաթ բաշայի Բ. Դուռն դիտեր զայն. բայց Միտհաթ ընդհանուր ժողովոյն իրեն ըրած երկայն յայտարարութեանը մէջ մուշեք Լօրտ Սալիզպրի աւանջէն վար փոխածը, զոր Սալիզպրի պաշտօնապէս Լօրտ Տէրպիլին ծանոյց, և որուն վրայ այսօր ազատաբար կրնան խօսիլ, վան զի Անգղիական խորհրդարանին ատենագրութեանցը մէջ, այսինքն կապոյտ մասնին մէջ հրատարակուած է.

Մեծ Եպարքոսը որ իւր արքային փառաց նախանձախնդիր կերնար, սահմանադրութեան անբռնաբարելիութեանը նահատակ և պաշտպան Բարիզի դաշնագրոյն իններորդ յօդուածոյն, այս բաները որ իրեն համար նուիրական էին և օտարաց առաջարկութեամբը պղծութեան ենթարկեալ, նոյն Մեծ Եպարքոսը իւր բերնով առաջարկեց թէ Սուլթանին նոր հրատարակած սահմանադրութիւնը այնպիսի ձեռով մը տէրութեանց ծանուցուի, որոյ գործադրութիւնը Բ. Դրան և օտար տէրութեանց մէջ համազգային

հսկողութեան ենթարկուի. Տաճիկ պաշտօնէկց ձեռքը ըլլուելու քաղաքական վարչութեանց բարենորոգութիւնքը, տէրութեանց հաւանութիւնը ընդունելէ յետոյ գործադրուին. և իբրև միևնոյն դաշնակցութիւն ընդհանուր ծրագրոյն մասը համարուին. ասկէ զատ Սուլթանին՝ քրիստոնեայ հպատակացը նկատմամբ՝ որն ինչ բարենորոգման հրովարտակը, տէրութեանց երաշխաւորութեանը տակ ըլլան, որք իշխանութիւն ունենան զանոնք գործադրելու համար գործածուած միջոցներուն վրայ հսկելու. . .

Ի՞նչ հասկնանք այս առաջարկութեանէս, պատու և ամբողջութեան հակառակ երեւցող՝ երեք գաւառաց համար եղած առաջարկութիւնքը՝ որք առժամանակեայ էին, Միտհաթ կուզէ որ միշտ սահմանադրութեան, կայսրութեանը ամբողջութեանը և գաւառաց վերանորոգմանցը վրայ ալ տարածուին, յանձն առնելով նաեւ հսկող համազգային յանձնաժողովոյն ընդ միշտ գործելը.

Միթէ Սուլթանին հաւանութեամբը այս առաջարկութիւնը եղաւ, կամ թէ կը յուսա՞ր որ այսպիսի դաշնագրոյ մը ստորագրէ նա. իսկ ընդհանուր ժողովը՝ Միտհաթ բաշա կըրնա՞ր յուսալ նաև ստոր հաւանութիւնը առնուլ. Բայց բարեբազդաբար Լօրտ Տէրպիլ Միտհաթին պէս չը մտածեց և ամենեւին չը հաւանեցաւ այս կերպով տէրութեան անկախութեանը պատիւը, սահմանադրութիւնը և իններորդ յօդ-

ԵՐՔԻՆ

ՕՒՌՈՍ ԿԱՅՍԵՐ

ուսածը պաշտպանելու, բարեբաղդաբար լօրա Սարգիսի մոտիկ չըրաւ. Օսմանեան արտաքոյ կարգի նուիրակի մը լօնտրայի մէջ ըրած առաջարկութեանցը, սակայն իրեն քննարկացին ալ չը դանդաղեցաւ յայտնելու գնաւ պանխորհրդոյ ժամանակ, միայն թէ իննամիսէ մինչեւ ճիշդ թափեց զայն մերժելու քսելով թէ «Եթէ այսպիսի խնդրոյ իջ վիճել ձեռնարկէն Օսմ. կայսրութեան կործանումը փափաքած իջլայի, այս կերպով կործանեցաւ Բոսնիոյ թագաւորութիւնը»:

Արդեօք Միտհաթի նպատակն ալ դեպքանխորհրդոյ առաջարկութիւնքը մերժելով և նոր առաջարկութիւններ շինելով, այսպիսի կործանման մը ենթարկելն էր. Օսման էֆէնտի պաշտօնը արդեօք կայսրութեան ստք ձեռքը կապելով օտար տէրութեանց յանձնելն էր զայն, և երբ Տէրպի պարսաւեց այս առաջարկութիւնքը, արդեօք Միտհաթի միտքը դեպքանխորհրդոյ առաջարկութիւնքը մերժելով զՏաճկաստան առանձին պատերազմի մը աղէտիցը մատնելն էր, և Չճին պատահածին նման երեք դաւառաց համար ալ նոյնը կը փափաքեր:

Միտհաթի բարեկամացը կը թողունք այս հարցերուս պատասխանը գտնել. բայց կարծեմք թէ կապոյտ մատենին երևան հանած ճշմարտութիւններէն վերջը այլ ևս Միտհաթ բարեկամ չունենայ. այն ճշմարտութիւնները որ վերջին ամբաստանութիւնը բաւականապէս կատուգեն, այն ամբաստանութիւնը որով կայսերական երկիրներէն արտաքուսեցաւ Միտհաթ. իսկ մեք այս մատենան գրելով կուզենք կորզել իւր գլխէն քաղաքակրթ հանճարին պատիւը, և հասարակաց կարծիքը շինել որ կը վստայ թէ այս անկումիս պատերազմ յաջորդէ, մինչդեռ նորա կանգնումն խաղաղութիւնը խանդարեց:

Հեղինակը իրաւունք ունի, անհաւատալի կը թուի որ Միտհաթ այսպիսի առաջարկութիւններ ըրած ըլլայ, սակայն քընտաղատեղէ առաջ կտարոյս մատենին այդ յօդուսածը կարդալու է, ոյն ատեն կը հաւատացուի այսպիսի արտաքոյ կարգի առաջարկութիւն մը:

Քուրիէ

Սհաւասիկ երեկուան խօսած բացման ճառին Հայերէն թարգմանութիւնը:

Տեարք Ծերակոյտի և Երեսփոխանական ժողովոյ,

Օսմ. կառավարութեան մէջ առաջին անգամ ըլլալով ընդհանուր ժողովոյ գումարման վրայ իմ գաւառականութիւնս կը յայտնեմ:

Սմենուս ծանօթ է որ կառավարութեանց և ազգաց յառաջդիմութիւնն ու երջանկութիւնն միայն արդարութեան միջոցաւ յառաջ կուգայ: Մեր կառավարութեան նոր ծագումը միջոցին ունեցած զօրութիւնը, կառավարութեան դործոց մէջ արդարութեան և ամեն կարգի հպատակաց իրաւանց և շահուց յարգանք ընծայուելէն յառաջ եկած էր. իմ նախըրէս Ֆաթիհ Սուլթան Մահմուտ խանի կրօնից ազատութեան վրայ ցուցած արտօնութիւնները ամենուն ծանօթ է: Միւս նախորդներս ալ նոյն ընթացքին հետեւելով երբէք կրօնական ազատութիւնը արդեօք մը չը տեսաւ:

Վեց հարիւր տարիէ ի վեր ամեն կարգի հպատակաց իրենց ազգութիւնը, լեզուն և կրօնքը պահպանին այս ընդհանրական ընթացքին հետեւանքն ըլլալը անուրանալի է: Վերջապէս այն դարերուն՝ արդարութեան ապահովութեան և օրինաց պահպանութեան երեսէն կառավարութեան և ազգին ճոխութիւնըն ու երջանկութիւնը թէեւ յառաջ գացած էր, սակայն երթալով ոչ Շէրը Շէրիֆին և ոչ հաստատեալ օրինաց չը յարգուելուն պատճառաւ՝ ձեռք բերուած յառաջդիմութիւններըն կամաց կամաց կորսուելու երես բունց և նախնի զօրութիւնը սկարութեան փոխուեցաւ:

Իմ մեծ հայրս Սուլթան Մահմուտ խան, մէկ քանի դարերէ ի վեր կառավարութեան տկարութեանը գլխաւոր պատճառ եղող անկանոնութիւնը և անկէ յառաջ եկած Ենիչէրիական խռովութիւնը բառնալով, այս մեծ կառավարութիւնն ու ազգը տկարացնող ապստամբական փուշերն մաքրեց և Եւրոպայի քաղաքակրթութեան մեր երկրին մէջ մտնելուն գուռ մը էն առաջ ինքը բացած էր: Իմ հայրս Սուլթան Մէճիտ խանն ալ

նոյն շաւղին հետեւելով մեր ժողովրդոց կենաց, ընչից և պատուոյ ապահովութիւնը երաշխակամ էր:

Սհա այն օրէն յետոյ մեր երկրին վաճառականութիւնն ու երկրագործութիւնը ընդարձակեցաւ և կառավարութեան եկամուտը քիչ ժամանակի մէջ քանի մը պատիկը տեղեցաւ նաև պէտք ունեցած բարեկարգութիւննիս յառաջ բերելու համար օրէնքներ և կանոններ հաստատուելով դատարարականութիւնը քիչ շատ յառաջ գնաց: Այս սկզբունքն և մանաւանդ ներքին ապահովութենէն կառավարութեան յառաջդիմութեան յայտնի միջոցեւ գոյացած էին, Քրքմի պատերազմը երկրին և հպատակացը յառաջանալուն արդելք եղաւ. եւ մինչև այն ատեն երբ կառավարութիւնը մէկ ստակ անգամ արտաքին պարտք չունէր՝ զինուորական ծախուց մեր եկամուտովը դիմանալ անկարելի ըլլալով դուրսէն փոխառութիւն ընելով այդ պէտքերը հոգալ անհրաժեշտ եղաւ և այս պատճառաւ պարտքի դուռ բացուեցաւ, թէ և այն խնդրոյն մէջ մեր իրաւունքները հաստատող՝ մեծ տէրութեանց պատմութեան էջերուն մէջ յաւիտեան պատիւ համարուելիք մեզ ըրած գործնական օգնութեամբը պատերազմէն վերջը եղած խաղաղութեամբ մեր երկրին ամբողջութիւնը և անկախութիւնը մեծ տէրութեանց երաշխաւորութեանը տակ առնուեցան և այս հաշտութեամբ մեր ներքին գործերը կարգին գնելու և ապագային յառաջդիմութեան ուղի դամբայ մը բռնելու հաստատ համոզում մը գոյացած էր, սակայն հետզհետէ եկած դէպքերը այդ յուսոյն բոլորովին հակառակը երեւան հանեցին:

Վաղը ամբողջ

Ամերիկա գտնուող Ռուսնաւատորմը հրաման ընդունել է Միջերկրական ծով մտնելու:

Երէկ Ընդհ. ժողովոյ բայման հանդիսին պատճառաւ Բ. Գուռը դոց էր:

Յունաց Պատրիարքը առջի օր Մեծ Եպարքոսին և Արտաքին գործոց պաշտօնէին ապարանքը երթալով երկար ատեն տեսակցեր է:

Խալիմ և Շէրիֆ բաշաները,

պետական խորհրդոյ անդամ անուաներ են:

Իմայիլէն ամոյս Անն հասած հեռագիր մը 5000 Գաղաք ձիւտորներու Ռուսանիոյ սահմանագլուխը անցնիլը կը դուժէ:

Երեսփոխանական ժողովոյն անդամներէն Եուսուֆ էֆ. հրաժարելով տեղը ծխախոտի վաճառականներէն հաճի Սհ. մէտ էֆէնտի ընտրու եր է. նոյն պէս նաև Սէրվիլէն էֆ. ծերակոյտի անդամ անուանուելով տեղը ոչ-մահմետական երեսփոխան մը պիտի ընտրուի:

Նախկին Պատրիարք Յունաց իղիքոս էֆ. ծերակոյտի ժողովոյն անդամ ընտրուել է:

Ռուսիա Գարատաղի իշխանին հեռագիր մը քաշելով յանձարարներ է որ իւր չափազանց պահանջմունքէն ետ կենայ և խաղաղութիւնը կնքելու նայի. աոր հակառակն ալ Գերմանական լրագիրները կ'ըսեն թէ Ռուսիա ծածուկ կաշխատի բանակցութեանց աւրուելուն:

Ծերակոյտի և երեսփոխանական ժողովներն այսօր ժամը 5ին Մեծ Եպարքոսի և մեծամեծ նախարարաց ներկայութեամբ իրենց առաջին նիստը պիտի կատարեն:

Ստէնտարտ կ'ըսէ թէ Հերսէքի ապստամբները Բ. Գուռէն ընդհանուր ներում ինդրելով իրենց հիւղերը քաշուելու վերայ են:

Նարօլիէն կը հեռագրեն թէ Մարտի Աին գիշերը Օսմանեան հիւպատոսին տունը Միտհատ բաշայի համար շքեղ երեկոյթ մը տրուելով, բոլոր հիւպատոսք մեծամեծք և երեսփոխանք ներկայ գտնուել են, և հանդէսը երթալով գեղեցկացեր է:

ԱԶԳԱՅԻՆ

Գիտենք ընթերցողք թէ վարչութիւնը Ղալաթիոյ առժամանակեայ Թաղ. խորհրդին անդամները պաշտօնէ դադարեցընելով հրաւիրած էր զիրենք խորհրդոյն կնիքն ու տուժարները յանձնել նորընտիր խորհրդոյն. սակայն անոնք չէին ուզած վարչութեան որոշմանը հնազանդիլ բողոք բառնալով Ազգ. ժողովոյ ատենաք:

Շարաթ օր, վարչութեան Գաղ. ժողովն իւր որոշումը

դործադրելու համար իւր մէջէն երկու անձինք Տնտես. խորհրդոյ դիւանը, Պատրիարքական փոխանորդ հայրը և Գաբուքէհեատին կը դրէի ի խորհրդաբան Ղալաթիոյ Պատգամաւորները նորնախը թաղ. խորհրդոյ անդամոց հետ կը մտնեն ՚ի խորհրդարան, զորս վարչութիւնը ետաքճիներու միջոցաւ ժողոված էր Պատգամաւորք վարչութեան որոշումը կը հարգուէն նախորդ թաղականաց բայց նոքա չեն հնազանդիր, այլ կ'առարկեն թէ վարչութեան որոշումը հակառակ է Սահմանադրութեան. նորնախը թաղականք կազմակերպ թէ այս պայտօնը մարդու չեն յանձներ: Սոնց փաստաբան կը կանգնի Վէրլ տէր հայրը և կը ջանայ ապացուցանել թէ թաղ. խորհուրդը ընտրելու իրաւունքը վարչութեանն է և ոչ թէ Ղալաթիոյ ընտրողաց հետեւաբար իրաւունք չունի հրատարեցուցեալ թաղ. խորհուրդը վարչութեան չը հնազանդելու:

Վարչութեան ներկայացուցիչներն բաւական կը համարին եկեղեցւոյն բոլոր պաշտօնեայները գոչելով ՚ի ներկայութեան հրատարեցուց հրապարակաւ ծանուցանել, թէ նախորդ թաղ. խորհուրդը պաշտօնէ դադարած է, այլ ևս բնաւ դործ չունի հոն. և թէ իրենք նոյն վայրկեանէն նորնախը թաղ. խորհրդոյ հրամաններուն միայն պիտի հընազանդին:

Ահա մեր անցեալ թուով բրած նախատեսութիւններն իրականութիւններ կըլլան: Աջակողմ խմբակը, որոյ բերանը միշտ Սահմանադրութիւն, օրէնք, արդարութիւն բառերը կարտասանէ, ամեն բան իւր հաճոյնց և շահուց ծառայեցնելու կը յանդգնի ազգային օրինաւոր իշխանութեան դէմ. որու ներկայացուցիչն է Աղդ. ժողդ. վճ. ստորակարգեալ մարմինները կը գրգռէ յապրատմութիւն, իրեն համախոհ թերթերուն մէջ ազգային դործոց վրայ ճշմարտութիւնը խեղաթիւրելով հողարու մէկ զրպարտութիւններ կընէ: Իւր անդամներն Աղդ. ժողովոյ մէջ երբ կը տեսնեն որ իրենց մեքենայութիւններն մեծագոյն մասին զգօնութեան առջև կը խորտակին, ժողովին բարեկարգութիւնը կը խանգարեն ամեն տեսակ աղմուկներով, և անկարելի կընեն նիստը շարունակել, որով ազգին կենսական գործերն երեսի վրայ կը

թողուն, և յետոյ կը պօռան թէ ազգը դործ չը տեսնեն: Ազգային ժողովոյ վրայ ճնշում բանեցնելու համար շատ անգամ բարեմիտ գաւառացւոց խումբեր կը կազմեն և կառավարուէն ազգային ժողովոյ խորհրդարան: Ամեն ջանք ի գործ կը դնեն կեդր. վարչութեան և նորա ճիւղերուն մէջ իրենց համախոհներ կամ արբանեակներ ընտրել տալ՝ որչափ որ ալ անարժան ըլլան:

Վերջապէս ամեն հնարք և միջոց ի գործ կը դնեն գաւառաց առաջնորդներն և Պօլսոյ եկեղեցեաց քարոզիչներն իրենց համախոհներէն և վարժարանաց ուսուցիչներն ալ իրենց արբանեակներէն ընտրել տալ, որպէս զի ամեն տեղ բարեմիտ ժողովարդը խաբելով կարենան ազգին մէջ զօրութիւն վաստակել, որոյ օգնութեամբ և ի վերնաս ազգին կարենան իրենց մեքենայութիւններն յառաջ տանիլ:

Բայց դրամի պակասութիւն ունէր, ուստի այժմ կուզէ Ղալաթիոյ եկամուտները ձեռք անցնել, որպէս զի դիւրութեամբ կարենայ մարդ վաստակել, բայց Ղալաթիոյ ընտրողները չը պիտի թողուն ասոնց այս բանն ընելու, ինչպէս որ կիրակի օր տեսնուեցաւ ասոր փորձը:

Պայազիտէն յունվար 20 թուով և մէկ քանի ստորագրութեամբք առ մեզ ուղղեալ երկար նամակէ մը, որ երէկ հասաւ մեր ձեռքն, և որ սպանութեան սրտածմիք անցք մը կը նկարագրէ, -հետեւեալ քաղուածքը կընեմք:

«Ամսոյս 18 էր, գիշեր էր, համակ բնութիւն լռիկ և մեղիկ ՚ի հանգիստ, ժամը 7 ին ատենները, յանկարծ գոռում գոչում մը ականջնիս թնդացոյց. քաղաքիս ամբողջ Հայ հասարակութիւն տիրեց ու պատեց ողբումն ու լալումն յոյժ. կողբալին Մ. Գեորգեան գերդաստանի մէջ տեղի ունեցած եղբնապարծութեան մը համար: Բնիկ տեղացի աւազակաց խումբ մը գաղտագողի կը մտնեն նախ յիշեալ գերդաստանի գլուխն եղող ծերունւոյն սենեակ, դաշոյնի հարուածներով կը վիրասուրեն զնա, և փայտի հարուած մ'ալ նորա զառամեալ կնոջ իջեցունելով՝ մէկդի կը հրեն, իսպառ չը խնայելով ալէզարդ ծերունւոյն աղաչա-

նաց, թէ ամենայն ինչ ձեզ լիցի, ինչայեցէք գէթ մեր անձինք: Անտի միահամուռ կը դիմեն նորա միակ որդւոյն սենեակ, երբ ծագեալ սակ լծակցին հետքաղցր ի քուն էր. կսկսին դաշոյնի հարուածներ տեղալ նոյս վրայ. կարթննայ նախ մանկամարդ ամուսինն՝ շուարած ու այլայլած, և ոտքերնին կը պըլլուի կը պաղատի. բայց փոխանակ գէթոյ՝ սրոյ հարուածներ կ'ընդունի կարթննայ երիտասարդ այրն ալ. նա ուլ անդադար դաշոյնի և սրոյ ծանր հարուածներ կ'ընդունի, և վերջապէս աւազակք կը փախչին՝ զանոնք երկուքն ալ արիւնլուայ կարեմէր և կիսամահ վիճակի մէջ թողլով: Ո՛չ ոք կը փութայր յօգնութիւն սոցա, որովհետեւ աւազակք յառաջագոյն գրեհն կղպած էին մերձակայ դրացեաց դռները: Հաղիւ կըսթափի ծերունի պառան կերած հարուածներէն և առանց որդւոյն սենեակը դիտելու դուրս կը ցատկէ, օձիք պատառելով, աղիողորմ ճիչերով, օգնութիւն, օգնութիւն կաղաղակէ: Սորա աղաղակներէն կշտայեն Հայք, բայց ՚ի զ'ուր, անհնար էր դարման գտնել սաստիկ վիրաւորեալ երիտասարդ լծակցաց. այրն՝ 10, և կինն 14 տեղէ վիրաւորուած էին, բայց ՚ի գլխաւոր վէրքերէն, որովք աղիքնին ու լեարգն դուրս թափուած էր: Առաւօտեան ժամը 5 ին հացիւ վերջին թոշակին արժանանալով կնքեցին իրենց նորաբաց աչերն և մեռան: . . . Ծերունի հօրն ալ բժշկութիւնը երկրայելի է:

«Հետեւեալ օրը երկու թըռուռ ամուսնոց յուղարկաւորութեան եղերահանդէսը կատարուեցաւ. արանց կանանց ու երիտասարդաց անհամար բաղբութիւն խունած էր եկեղեցւոյն մէջն ու դուրսը. վայնասուն՝ աղաղակ, գոռում գոչումն, լալումք յոյժ յոյժ. տիրասագեցիկ դազազք շրջագատեալ էին քերց, եղբարց ու մտերմաց դասէն. նոցա կտտամահ սպանումն ի խոր խոցած էր զամենքը. ո՛վ կարէ վերցունել դագաղները և հանդատարան տանիլ, դաղաղք կը քաշկռտուէին ի հարազատիցն. հաղիւ ուրեմն դերեղմանատուն՝ տարուեցան. կրօնական արարողութիւնք կատարուեցան, բայց կականալիւ և արտասուաթափ աչօք, բայց եղերերգութեանց բարձրագոյ ու աղետախարչ ա-

ղաղակաց հետ խառնն Սոսպէս ի մի հնձան և ի մի գուր ձմերչան երկու նորահաս սղիոյղներ . . .

«Այժմ Պայազոյ Հայն՝ որոց, ցաւոց ու սարսափի մէջ է. դեռ տարին չը լրացած՝ այսպէս երկու ծանր եղբունադործութիւնք տեղի ունեցան:

«Տեղական կառավարութիւնը, երրորդ օրը արեւսամած դաշոյններու երեւմամբ ձերբակալեց քանի մը չարադործ, որոց երկուքին վրայ յայտնի ապացուցուած է:

«Երիտասարդ հանդուրեալն ունէր հայրենասէր սիրտ մը, մարդաշահ և ընկերասէր և բարեբարոյ. հազուագիւտ էր քաղաքիս նոր խմբին մէջ: Ճոխ գերդաստան մը իսպառ զրկուեցաւ միակ հարազատէ մը. մարեցաւ նորա հայրենի տան ճրագը. այսպիսի անհատ մը պակսեցաւ ազգէն, իսպառ յաջորդ մը չունենալով ալեզարդ ծնողացն, որոց ապաւէն ու նեցուկն էր. թողուց վեցամսեայ դառնուկ աղջիկ մը:

. . . Խմբագիր, ձայն բարձ, սիրուն փունջիդ միջոցաւ, առ կեդրոնական վարչութիւն Հայոց:

Ձայն բառնալ. - մեր պարտքն է և կը կատարեմք մեր այս պարտքը: Սակայն, ո՛վ վշտահար Պայազիտցիք, կեդրոնական վարչութեան ֆաղաքական ժողովն այժմ դժբաղդաբար Ղալաթիոյ թաղական խորհրդոյ խնդրով զբաղեալ է:

ԳՐԱՄԱԿԱՆ

ՄԱՐՏ 7 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Հինգնոց	413—00
Մէթալիք	414—00
Մէճիտիյէ	404—20
Պիլինձ	467—
Անգղ. վերա	409—35
Բօլ	89—10
20 ֆրանկ	87—17
Գրիմից	51—20
Թղթագրամ	464—20

—
 Լօնտրա 16 մարտ
 Էսհամբ ումումի 12—07
 Բարիդ 16 մարտ
 Էսհամբ ումումի 42—37

—
 Գօնսօլիտ
 14—11 բացիլե.
 00—00 բարձր
 00—00 ցած
 00—00 դոյզ

ՏՕՔԹԵՕՌ ԶԷԼ ԱԼԵՍՆ

Մասնաւոր դարձանիշ գաղիական ակտից, միզանցքափորփոքմանց և անբող ծնընդական դործարաններու վերաբերեալ հիւանդութեանց:

Տօքթէօն ճէլալիան էֆէնտին Բարիզի և Պէլճիքայի բժշկական դպրոցներուն մէջ թէ աշակերտութեանը միջոցին և թէ վկայեալ բժիշկ անուան վերէն վերջը յատուկ աշխատութիւն տուած ըլլալով յիշեալ կարգի հիւանդութեանց, կը ծանուցանէ, որ ամէն երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ օրերը ժամը 6էն մինչև 11 Պախէ քարու Համիտիէ թիւրպէտին կարգը Սինապետն վիշէն էֆէնտինին իջի գաբուլու գեղարանը թիւ 32. իրեն դիմող հիւանդները պիտի ընդունի. նաև շաբթոյն միւս օրերն ալ ժամը 6էն մինչև 10 Բերա քայլծնծի գուլլուքի կից թարլապաշի ճատտէսին 117 թիւ իւր բնակարանը:

Տ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ԳԾԱԳՐԻԶ

Պատիւ ունի ծանուցանել որ ճարտարագիտական շինուածոց ամեն տեսակ գծագրութիւններ, արաբական և եւրոպական դարձաններու (օւնըման) վերաբերեալ գծագրութիւններ յորինելու, նաև երկրաչափութեան վերաբերեալ որ և է աշխատութիւններ ընելու պատրաստ է: Նոյնպէս պատկերահանութեան մասին իւզաներկ և քարաքալէմ կենդանագիրներ և ընդօրինակական (բէրաբէկիթիվ) գծագրութիւններ գուհացուցիչ կը կատարէ:

Վերոգրեալ գծագրութեան ամէն ճիւղերուն համար թէ վարժարանաց մէջ և թէ ի մասնաւորի դասախօսելու պատրաստ է:

Ձինքը տեսնել ուղղը բաց ի ուրբաթ և կիրակէ օրերէ կէս օրէն ետքը կրնայ գտնել Նափիայի մէջ բէնամ օտտալին, միւս ժամանակները Սամաթիա իւր բնակարանը:

Գարակէօմրիկի եկեղեցւոյ կարուածներէն Գարակէօմրիկ ֆիլիսա փողոցը թիւ 6 խան, սրճանոց և քուրու գահվէճի խանութ ինն հարիւր յիսուն զուրուշ ամսական ունի: Այս անգամ պայմանաժամը լրացած ըլլալուն ուղղը Գարակէօմրիկի եկեղեցւոյ խորհրդարանը

լուր օրերը ժամ երկուքէն մինչ չորս և կիրակէ օրերը մինչ ժամը 8 թաղ խորհրդոյ հետ կրնայ տեսնուիլ մինչ մարտ 14:

Ի դիմաց թաղ խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Գ. Գիւլպրիթճեան Ս. Բարթամեն

ՏՕՔԹՕՐ ՄԱՐՔԵՐ

Վիշննա մէքթէպլէրինտ! պէշ սէնէ մուգատտէ՛մ Կիւլումա ալմըշ վէ պիր չող Է՛յ սպա խաութախանէլէրտէ բուվա իթմիշ օլանն տօքթօր Մարքեր՝ պու տէֆա Պէշիթթաշտա Բաշա մահալլէսինտէ բուվա քիլլուքի գարչքօնտա 4 նիւմէրօլու քէնտի խանէսինտէ հէր կիւն սաաթ 3-3է բազարտան մաստա ֆաղիթ խաթալարա մէճճանէն պագաճագ տըր:

Տօքթօրը միւսայիլէյհ հէր կիւն Գալաթատա վօյվօտա սօղաղընտա Բօլճնէղ էճղախանէսինտէ սաաթ 7-9ա գատար պուլուշ ուպ հէր նէվի խաթալարա պագաճագ տըր:

Պուստան մաստա վագթլարտա պալէւտէ գիւր օլուսնան խանէսինտէ պուլուշուր:

Միւսայիլէյհ տօքթօր, ճէրահլըզ վէ էպլիք վէ բահիմ իւֆիլնէթի, գանլը վէ գուրու պատուր, սթթմա, կէօյիւս, տէրի խաթալարը, ֆրէնկի վէ օնտան գալմա գուլազ, պուրուն կէօզ վէ բահիմ վէ ելլէրի նէ գատար էսիլի օլա բէհրիլըիզ ազ վագթլ օւլլընտա տէֆիւտէճէք, վէ պլէսուգուլուգ եէնի վէ էսիլի քէնտի ալէաթընտա օնտէֆատա տէֆիւտէճէյնի իլանն իլլէր:

Գեկտ. 9

Ի Լ Ա Ն

ՄԻՀՐԱՆ ԱԲԻԿԵԱՆ

Եաղճը խանընտա իւսթ գաթտա՛՛՛՛ նիւմէրօլու օտտաա հաֆթատա հէր կիւն էօյլէնտէն սօնրա թալիպ օլանլարա իրան լէտաֆէթ պէյանը թիւրքի թալիմ վէ շակիրտանը հէր վէճէլէ խօշնուտ իտէճէք տիր:

Աղգ. Հիւանդանոցի ներքին բժիշկ Տօքթօր Գարբիէլ էֆէնտի Նահապետեան, այսուհետև ամեն չորեքշաբթի օրերը ժամը 6էն 8 Սամաթիա իմրահօրը թօ

գաթիւան Պ. Գարբիէլի դեղաբանը, և ուրբաթ օրերը ժամը 6էն 8 դարձեալ Սամաթիա Մ. Ճիվանաքիլին դեղարանը, նաև Հիւանդանոց իօեն դիմող ազքատ հիւանդաց ըստ առաջնոյն բաւա ըլլալու պատնայի ձրի ը կը ծանուցանէ արգոյ հասարակութեան:

Ը Ն Դ Ա Ր Չ Ա Կ

ՕՐԱՑՈՑՑ

1877

ԹՈՒԱԿԱՆԻՆ ԳՐԻՍՏՈՍԻ

յօրիկայ

Յերէմիա քահանայէ խաթալուղի

Պարունակութիւնը.— Վեհ. կաթողիկոս ամենայն Հայոց, և Բարձրաշնորհ Պատր. Կ. Պօլսոյ Աղգ. Ընդհ. Ժողով, բաղկացեալ ի 140 անդամոց յականէ անուանէ նշանակեալ, և ըստ իւրաքանչիւր դաւառաց Տաճկաստանի:

Աղգ. Վարչութիւն, կրօն. և ֆաղ. Ժողովոց անդամք և պաշտօնք նոցա:

Աղգային դիւանատուն եւ գործադիր պաշտօնեայք:

Գատաստանական՝ Ուսումնական՝ Տնտեսական խորհուրդ և Ելմտական հոգարարձութիւն և պաշտօնք սոցա:

Ընդհանուր ցուցակ առաջնորդաց և առաջնորդական տեղապահաց Տաճկաստանի դաւառաց:

Ցուցակ երկսեռ անուանց մկրտելի երախայից պաշտօնապէս աւանդեալ ի նախորդ կըրօնական ժողովէ ի դիւրութիւն աղգայնոց:

Շքանուանք ըստ իւրաքանչիւր աստիճանի և արժանեաց պատկանեալ:

Տաճկաստանի կայսր և կայսերազունք:

Բարձրաստիճան նախարարք Օսմանեան տէրութեան:

Հայազգի զանազան պաշտօնատարք Օսմանեան կառավարութեան ի Բ. Գուռն արքունի:

Վիճակագրութիւն բոլոր աղգային վարժարանաց Կ. Պօլսոյ և որքանութիւն Հայազգի երկսեռ աշակերտաց և տարեկան ծախք ուսուցանող վարժապետաց:

Որ բոլոր գլխավաճառաց քով կը վաճառի

Ի Գին 3 ՊՁ

Գ Ր Ա Տ Ո Ւ Ն
ԵՒ
Թ Ղ Թ Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ո Ց
Ա Մ Գ Ա Ր Ի Պ Ե Ա Ն
Թ Ի Ի 408

Ուղուն Չարչը Շէրիֆ բաշա խանի դէմ

Այս գրատան մէջ կը գտնուին թէ նոր և թէ գործածուաց ամեն լեզուէ դրեանք, նաև գրի և գծագրութեան վերաբերեալ պիտոյքներ և ըն:

Օ Ս Ս Ի Ա Ն Ո Ւ

ՍԿՈՎՏԻՍՏԻ ԳՐԻՍՏՈՂԻՆ

Գ. ԳՍՐՈՒՆ

Ք ե Ր Թ ու ս ծ

Թարգմանեց

Գ. Յ. ԱՏՐՈՒՆԻ

Սոյն հեղինակին քերթուածոց արժէքը որ մինչև Հոմերոսի հաւասար կը համարին բազումք յեւրոպայի գրագիտաց, այժմ հայերէն աշխարհաբառ լեզուի թարգմանուած ու սպագրուած է, իրաւամբ կարժէ որ գտնուի ամեն հայ բանասիրաց գրատան մէջ: Կը վաճառի Մէրճան չարչը գրապաճառ Սրապեան Պալատասար աղայի և ուրիշ գրապաճառաց քով:

Գին 5 ՊՁ

ԳՐԱԿԱՆ

130 պատկեր, 48 երեսէ բաղկացեալ ընտիր թղթով և կազմեալ. կեդրոնատեղին է Չարչարեան գործարան Կ. Պօլսոյ Սուլթան Համամ թիւ 14 կը գտնուի նաև ամեն գրապաճառաց քով: Գին 40 փարայ: Դպրոցաց համար հարիւրին 10 զեղ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

ՄԱՐԻՕՆ ՏԸԼՈՐՄԻ
Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ա Ն Ք Ը
կամ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հեղինակ

ԷՕԺԷՆ ՏԸ ՄԵՐԳՈՒՐ

Կը ծախուի Եֆէն-ճամի Չիլին կիրէր ճատտէսի թիւ 8, Ս. Ղ. և Եազմաճեան գրատունը գին 2 Փրանք:

Ամբողջ գործը 2 հատորէ պիտի բաղկանայ:

ԽՄԲԱԳԻՐ

ՏԷՐ ԵՒ ՊԱՏԱՍԻՍՆԱՏՈՒ

ՕԳՄԷՆ ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Օ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ
ԵՈՒՍԵՖԵԱՆ ԽԱՆ ՎԵՐԻ ԵՐԿ
Թիւ 7